Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

09.03.2017թ. ք. ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատությանա լեյտենանտ՝ Կ. Մարգարյանս, ուսումնասիրելով 07.10.2016թ. վարույթը վարույթ ընդունած թիվ 001040449 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 03.02.2015թ. տրված թիվ ԵԱՆԴ/2946/02/14 կատարողական թերթի համաձայն պետք է Միքայել Հրաչիկի Հակոբյանից հօգուտ ՙՎՏԲ-Հայաստան բանկ՚ փակ բաժնետիրական ընկերության բռնագանձել՝ 262.555,50ՀՀ դրամ, որից վարկի գումարը՝ 156.000ՀՀ դրամ, վարկի դիմաց հաշվարկված տոկոսը՝ 9.129,20ՀՀ դրամ/ որից ժամկետանց տոկոս 9.129,20ՀՀ դրամ/, ժամկետանց տոկոսի դիմաց հաշվարկված տույժը՝ 5.386,30ՀՀ դրամ, ժամկետանց գումարի դիմաց հաշվարկված տույժը՝ 92.040ՀՀ դրամ; 08.05.2014թվականից մինչև պարտավորության դադարման օրը ժամկետանց վարկի մնացորդին և տոկոսներին օրական 0,2տոկոս դրույքաչափով հաշվարկվող տույժերը; 5.251,11ՀՀ դրամ՝ որպես վճարված պետական տուրքի փոխհատուցում:

Պարտապանից բռնագանձել նաև կատարողական գործողությունների կատարման ծախս՝ բռնագանձվող գումարի 5 տոկոսի չափով:

Կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է դրվել պարտապանին պատկանող և <ՎՏԲ-Հայաստան> բանկ ՓԲԸ-ում գրավադրված ոսկյա զարդերի վրա::

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ‹‹Դատական ակտերի հարկադիր կատարման մասին›› ՀՀ օրենքի 28, 43, 67 և ‹‹Հրապարակային սակարկությունների մասին›› ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան Միքայել Հակոբյանի կողմից գրավադրված ներքոհիշյալ գույքերը.

հ/հ	լոտի անվանումը նկարագիրը	գույքի քանակը	գնահատման գինը	մեկնարկային գինը
1.	Շղթա /12.0գր./ հարգ 583	1	132.000 դր.	99.000 դր.

Ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ http://harkadir.ajurd.am կամ www.ajurd.am միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 08 «մայիս» 2017թ.

Որոշման պատճեն ուղարկել կողմերին.

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան կամ վերադասության կարգով որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

'Դատական ակտերի հարկադիր կատարման մասին' ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԼԵՅՏԵՆԱՆՏ _____ Կ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում:

«Հրապարակային սակարկությունների մասին » ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը /գույքը/ չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ԴԱՀԿ ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: